




ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՅԱՆ

Ս. ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ*

Քրիստոսի ա. խաչի հետ՝ ամենից նվիրական, խորհրդավոր և սրտի մոտ սրբությունը հայ քրիստոնեի համար ա. մյուտոնն է: Այլ և քրիստոնեական պաշտամունքի հետ կապ ունեցող ամեն մի իր և անձն այն ժամանակ է միայն սրբազան բնավորություն ստանում նորա աչքում, երբ, ա. մյուտոնի դրոշմը կա վրան. նա խաչ է հանում երեսը եկեղեցու, ա. Սեդանի, ա. ավազանի, սրբոց պատկերների առաջ, որովհետև ա. մյուտոնով նվիրագործված են. համբուրում է եկեղեցվո պաշտոնյաների աջը, որովհետև օծ-

յալ է. հարգում է դավանակցին, քանի մյուտոնի նշան է տեսնում սորա ճակատին. իսկ երբ սա հայ քրիստոնեին անվայել ընթացք է ցույց տալիս, կնշանակե՝ ճակատի մյուտոնը պակասել է, կամ իսպառ վերացել: Կանաչ մյուտոնով կնքված երդումը հայ քրիստոնեի ամենածանր երդումներից մեկն է. ավազանի ա. մյուտոնով կնքված բարեկամությունը ավելի նվիրական է գրեթե և ավելի հաստատուն, քան արեհակցությամբ ու խնամությամբ եղածը: Եվ որովհետև մի հատիկ կաթսայի մեջ, ա. Լուսավորչից սերընդն սերունդ ժառանգած օրհնությամբ՝ եփվող մյուտոնի կնիքն է, որ մկրտության ավազանից ի վեր որոշում է յուրաքանչյուր հայ անձի կոչումը մարդկության մեջ, այդ նույն մյուտոնն է հանդիսանում ամենասերտ և ամենից ամուր հոգևոր զոդը ի սխյուռն աշխարհի տարածված բոլոր հայերի համար: Սրբալույս մյուտոն, որ աստվածային սրբությամբ մաքրում է մեր մեղսամած մար-

* Սիրով և երախտագիտությամբ վերահրատարակում ենք Մայր Աթոռի վաստակաշատ գիտնական-միաբան, հանգուցյալ տ. Կարապետ եպ. Տեր-Մկրտչյանի սույն հոգեշահ և բովանդակալից ուսումնասիրությունը՝ 1976 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարազա ա. Խաչի տոնի օրը, Մայր Աթոռում սըրբալույս մեոնի կրկին օրհնության ուրախ առիթով: ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

միևնեքը և ճանապարհ բանում մեր հոգու առաջ դեպի երկնային լուստ հավիտենական կայանները: Ի՞նչ զարմանք ուրեմն, որ երբ և մյուտոնի կաթսան դրվում է երկնավոր մարտարապետի հիմնած Միածնի Իջման տաճարի սեղանի վրա և և. Լուսավորչի հաջորդ Ամենայն Հայոց ընդհանրական Հովվապետի օրհնության գիրք հրավիրում է լուսավորչական հոտին՝ դիմել դեպի հանուր Հայաստանյայց Մայր Աթոռը, ակաճառես և տոնակից լինելու այն մեծ խորհրդի կատարմանը, թե ինչպես և. մյուտոնի նորոգ օրհնությամբ անեղծ ու անշեշ է պահվում, մեզ և հաջորդող սերունդների համար՝ մեր երջանիկ նախնայաց սրբության և լուստ բազմադարյան ժառանգությունը, ի մի է ժողովվում և. Աթոռի շուրջ բազմուստեք հայության այնպիսի հարուստ ներկայացուցչություն և տեղի ունենում այնպիսի մեծաշուք հոգեպարար հանդես, որի նմանը չկա հայ մարդու համար ուրիշ ո՛չ մի տեղ և ո՛չ մի այլ առթիվ:

Ահա այս հանդիսի և նորա առարկա եղող սրբության մասին կփորձենք մի քանի պատմական տեղեկություններ տալ:

«Մյուտոն» բառը ծագում է հունարեն լեզվից, որ նշանակում է՝ հեղուկ, բույսից հոսող հյութ. բայց գործ է ածվում հատկապես ձիթենու պտղի հյութի կամ յուղի այն տեսակի համար, որ զանգված է անուշահոտ համեմունքներով: Ձիթենու յուղն իբրև օծանելի շատ հին ժամանակներից գործածելի է եղել եբրայեցիների, ինչպես և ուրիշ արևելյան ազգերի, հույների և հռոմայեցիների մեջ՝ իբրև կաշին ճկուն պահելու և արևի տապից պաշտպանելու միջոց: Մարմնի օծումը տեղի էր ունենում լվացումներից հետո, սովորաբար երբ զարդարվում էին (Հռոմ 3, 3) կամ ուրախական և տոնական հանդիսի համար պատրաստվում (Մաղմու 22, 5. Ամովս 6, 6). միևնույն տրամության օրերում, իբրև սգո նշան, օծումից բոլորովին հրաժարվում էին (Բ. Թագ. 14, 2. 12, 20). և դեռ Քրիստոսի ժամանակ սովորություն էր մնացել հյուրին պատվել գլուխը յուղով օծելով, իսկ արտաքո կարգի պատվի նշան էր ոտքերը թանկագին յուղով օծելը (Մարկ. 14, 3. Հովհ. 12, 3): Ձիթենու պարզ յուղի տեղ արդեն հին իսրայելացիների մեջ շատ դեպքերում՝ հարկավ ավելի ունևորների ու իշխանների մոտ, սովորություն է եղել գործածել թանկագին խնկեղենի ու համեմունքի խառնմամբ առանձնապես պատրաստածը (Ելք 30, 23 2.). դորա համար էլ այդ խնկեղենն ու համեմունքը

շատ գնահատվում էին և ամեն թանկագին իրերի շարքում հաշվվում (Ես. 39, 2. Գ. Թագ. 10, 10. Եզ. 27, 22). իսկ ամենից թանկագին օծանելիքը նարդոսի յուղն էր (Երգք 1, 12. Մարկ. 14, 3):

Սակայն արդեն Հին Ուխտի մեջ շատ նախնական ժամանակներից ի վեր օծումն ուներ նաև մասնակի՝ նվիրագործող, նշանակություն, և ինչպես առարկաներ, այնպես և անձինք, որոնք նվիրված էին Իսրայելի Աստուծո սպասին, կամ որոնց վրա փայլում էր աստվածային զորության ներկայությունը՝ օծված էին լինում ձիթենու յուղով: Այդպես, Հակոբ օծեց յուր գլխի տակի քարն այնտեղ, ուր հրաշալի տեսլան մեջ Աստված երևացել էր նրան (Ծննդ. 28, 16—19). օծված էր նաև Մովսեսի վկայության խորանը՝ յուր բոլոր Լահալորությամբ, սրբությանց սեղանով և ավագանով մեկտեղ (Ելք Խ 9—11): Նույն խորանին և սեղանին ապաստվորող քանան մանավանդ, որի ամբողջ կյանքը նվիրված պետք է լիներ Աստուծո պաշտամանը, օծմամբ էր ընդունում յուր սուրբ կոչումը (Ելք Խ 13—15. ԻԹ 7—9): Օծմամբ էին իշխանություն ստանում նաև Իսրայելի բոլոր թագավորները, որոնք Աստուծո հոգվով լցված՝ Աստուծո անունով, զորությամբ և օրհնոք պիտի դասեին ու առաջնորդեին Աստուծո ժողովրդյան, պաշտպանեին արտաքին հարձակումներից (Ա. Թագ. 10, 1. 16, 13. ևն.): Մինչև իսկ այն դեպքում, երբ մի օտար իշխան ներկայանում էր իբրև Իսրայելի Աստուծո կամակատարը, Նորա այս և այն վճիռն իրագործող երկրի վրա՝ դարձյալ Տիրոջ օծյալն էր կոչվում և երբեմն իրոք օծումն ընդունում (Գ. Թագ. 19, 15. Նաայի 45, 1): Այդպիսի արտաքո կարգի դեպքերում, երբ իսրայելացի կամ օտար մի կողմնակի անձն հրավիրվում է—Իսրայելի ժողովրդյան վրա թագավորական իշխանություն ստանձնելու և Աստուծո տնօրենություններն ի կատար ածելու՝ Աստուծո կողմից թարգման հանդիսանում էին և օծում կատարում մարգարեները, որոնք, իբրև անմիջապես Աստուծոց ընտրված և ուղարկված, նորա հոգվո ներքին ազդմամբ խոսող մարդիկ՝ պետք չունեին արտաքուստ յուղով օծված լինելու. բայց պատահում են մարգարեներ, որ օծմամբ ուրիշ մարգարեից ստանում են մարգարեական շնորհը (Գ. Թագ. 19, 16): Այսպիսով և. Գրքում ամեն անգամ օծման յուղը նկատվում է իբրև այն նյութեղեն միջնորդը, որ աստվածային ոգին և շնորհը ներգործական է դարձնում մարդոց մեջ և իրերի վրա:

Իսկ երբ պետք է զար աշխարհի Փրկիչը, որ ո՛չ միայն լի էր Հոգվով և զորությամբ

Աստուծո, այլ պատկեր իսկ աներևութից Աստուծո (Բ Կորնթ. 4, 4), որ և քահանա էր ու քահանայապետ՝ ըստ կարգին Մեղքի-սեղեկի (Եբր. 6, 20), և մարգարե և թագավոր հավիտենից, որի յուրաքանչյուր խոսքը և գործը և շարժվածքը աստվածա-յին էր, — հասկանալի է, թե ինչո՞ւ նորա գալստյան ակնկալողները և ավետողները սկզբից և եթ. նկատում էին նորան իբրև բա-ցարձակ Օծյալ Տյառն (Ղուկ. 2, 11. 26): Այս պատճառով Քրիստոս բառը, որ օծյալ է նշանակում և որ հունարեն լեզվով թարգ-մանություն է Փրկչի ժամանակակիցների ակնկալություններն իր մեջ ամփոփող «Մե-սիա» եբրայեցերեն — արամեերեն բառի, մը-նաց կապված փրկչական Հիսուս անվան հետ, իբրև նորա կոչումն ամենից ավելի բնորոշ կերպով արտահայտող մակդիր: Ին-քը Փրկիչը, երբ յուր քարոզությունն սկսե-լուց հետո առաջին անգամ Նազարեթի ժո-ղովարանը մտավ և Եսայա մարգարեության զիբրը բանալով՝ կարդաց այն տեղն, ուր ասված էր. «Աստուծո Հոգին ինձ վերա է, որովհետև նա ինձ օծեց, որպես զի խեղ-ներից ուրախության յուր քերեմ, նմ.» (Ղուկ. 4, 18) — ընդունեց այդ խոսքերն իբրև կան-խասացություն յուր մասին, հետևաբար և իրավունք տվավ իրեն օծյալ անվանելու, ինչպես և անվանում է Պետրոս առաքյալը՝ կենդանի հավատո յուր առաջին խոստովա-նության մեջ (Մատթ. 16, 16): Այս օրինա-կով նաև Քրիստոսի հավատացյալները, ո-րոնք նկատվում են իբրև Աստուծո նվիր-ված մի նոր սուրբ ժողովուրդ և ընդհանուր քահանայություն (Ա Պետր. 2, 9), որոնց համար արդեն Հովհաննես Մկրտիչը գուշա-կել էր, թե Հոգվով սրբով պետք է մկրտվեն (Ղուկ. 3, 16), — այդ մկրտության հետ նաև օծություն ընդունած էին համարվում և այդ օծմամբը ճշմարիտ ու կատարյալ աստվա-ծածանությունն ստացած (Ա Հովհ. 2, 20. 27. Բ Կորնթ. 1, 21. 22):

Արդ, ինչպես Փրկիչն ինքը, ի Հոգվույն սրբո ծնյալ լինելով՝ օծյալ էր անդատին, այնպես և նորա անմիջական աշակերտ-ները՝ նորանից ա. Հոգի և հոգևոր օծություն ընդունելով (Հովհ. 20, 22, 23), յուրով օծ-ման պետք չունեին այլ ևս: Քանի որ սա-կայն արդեն Քրիստոսի առաքյալների օրե-րում ղեկավար էին պատահում, երբ ա. Հոգին բաշխվում էր անկախ ջրով մկրտությունից (Գործք 8, 14—17. 19, 1—6), ամենայն հավանականությամբ շատ վաղ ժամանակ հավատացյալների համայնքի մեջ սովորու-թյուն մտավ մկրտյալներին յուրով օծել կամ դրոշմել՝ իբրև ա. Հոգին ընդունելու և նոր մարդ լինելու նշան, ինչպես որ ջրով մկր-

տությունը մեղքից արվելու և հին մարդու թուլություններից հրաժարվելու նշան էր. և առաքելական թղթերից վերև առաջ բերած վկայությունները, ուր հիշվում է հավատաց-յալների օծման մասին, իբրև ակնարկություն կարող են համարվել, որ այդ սովորությունն իրոք եղել է: Այսպիսով՝ օծման համար սրբազան յուր գործածելու կարիքը քոիս-տոնեական եկեղեցվո մեջ հառաջ է եկել դրոշմի խորհրդի հաստատությունից, որ իբրև մկրտության խորհրդի անհրաժեշտ տարրը՝ եկեղեցվո գլխավոր խորհուրդներից մեկն է, հավատացյալների վերածնության և երկնավոր կոչման արտահայտիչ նշանը: Բայց հայոց եկեղեցին սրբազան յուրը գործ է ածում ո՛չ միայն դրոշմի համար, այլ նաև եկեղեցական բարձր կարգի պաշտոնյաների ձեռնադրության միջոցին: Քրիստոսի առաք-յալները, ինչպես որ նոր հավատացյալների գլխին ձեռք դնելով և աղոթելով էին նոցա ա. Հոգվո շնորհը բաշխում, այնպես և ձեռք էին դնում և աղոթում, երբ հարկավոր էր համայնքի այս կամ այն անդամին որոշ պաշտոն տալ (Գործք 6, 6. 13, 3), երեց կամ եպիսկոպոս կարգել (Ա Տիմ. 4, 14. Բ Տիմ. 1, 5): Օրթոդոքս եկեղեցին և մեր հա-րելվան որիշ արևելյան եկեղեցիներ՝ ասո-րիներ, կոպտեր կն. բոլոր եկեղեցական պաշտոնները բաշխում են պարզ ձեռնա-դրությամբ և աղոթքով. միայն հոռովմեական եկեղեցվո մեջ օծում են քահանաների և եպիսկոպոսների ձեռները. այլ և օրթոդոքս եկեղեցիները օծում են թագավորներին՝ նկատելով նոցա, Հին Ուխտի թագավորնե-րի նման, իբրև Աստուծո օծյալ և Աստուծո օրենքն ու իշխանությունը երկրի վրա կա-տարող: Իսկ մեր եկեղեցվո մեջ միայն քա-հանայությունից ցած աստիճաններն են պարզ ձեռնադրությամբ շնորհվում, այլ և կրոնավորությունն ու վարդապետական աս-տիճանները. մինչդեռ քահանայի ձեռնա-դրության միջոցին օծում են թե՛ ճակատը և թե՛ ձեռները, իբրև սրբազնագործ պաշտոն-յալի, որ անմահ պատարագ է մատուցա-նում. ինչպես օծվում էին Հին Ուխտի քա-հանաները, որոնք զոհ էին մատուցանում. առանձնապես օծվում է նաև եպիսկոպոսը, որ հաջորդ է առաքյալների, հովվում է Քրիստոսի հոտը և ձեռնադրության շնորհը բաշխում. ինչպես օծվում էին Հին Ուխտի քահանայապետները, որոնք հաջորդ էին Ահարոնի, ձեռնադրում էին քահանաներին և, Բաբելոնի գերությունից հետո, առաջ-նորդում էին ժողովրդյան: Միայն մեր եկե-ղեցուն հատուկ է նաև Հալլապետի օծումը, որ տեղի է ունենում ա. մյուսոնք զազաթի վերա կաթեցնելով՝ իբրև ընդհանրական

գլխո եկեղեցվո և Փրկչի փոխանորդությամբ նորա հոտի միությունը պահպանողի: Թագավորների օծումը նույնպես, գոնե Բագրատունիների ժամանակից՝ մեր մեջ եղել է, և մեր Մայր Մաշտոցում առանձին կարգ կա դրա համար:

Արքայան յուղը կամ մյուտոնը գործ է ածվում մեր եկեղեցվո մեջ վերջապես եկեղեցի, և ի մասնավորի սեղանի վեմքարն ու ավազանը, խաչ ու պատկերներ օծելու համար. այլ և Զորահնաց հանդիսի միջոցին, երբ ու մյուտոնը կաթեցվում է Հորդանանը փոխարինող ավազանի մեջ, ի հիշատակ ու Հոգվո Փրկչի վերա իջնելու՝ մկրտության միջոցին: Առանձնապես խաչը օծելու մասին վեմ է եղել միջին դարերում մեր և ասորիների մեջ, որոնք ի թիվս այլոց պահարկում էին հայոց այդ սովորությունը, և մեր Գեորգ փիլիսոփա կաթողիկոսը՝ հայոց սովորությունը պաշտպանելով ասորվոց պատրիարքին գրած թղթի մեջ¹, հարցնում է. ինչո՞ւ պետք է թեզ անարժան թվի խաչի վերա մյուտոն ձգելը, քանի որ ինքը Քրիստոս խաչի վերա բեկտվեցավ: Այդպես և Ներսես Շնորհալիկն Ամայք գավառի ասորիներից գրած թղթի մեջ² բացատրում է, թե որչափ պատշաճ է հասարակ նյութից շինած խաչը ու մյուտոնով օծել, որպես զի ու Հոգվո գործությունը ստանա, ինչպես Փրկիչը պատշաճ համարեց, որ ու Հոգին Հորդանանում իջնե յուր վերա: Այս խոսքերից պարզ է արդեն, թե ի՞նչ նշանակություն էին տալիս մեր հայրերը ու մյուտոնի օծմանը ընդհանրապես:

Արքայան յուղ՝ ունենալով այսպես սովորական ընդարձակ գործադրություն մեր եկեղեցվո մեջ, քան ուրիշ եկեղեցիներում, առացել է նաև բացառիկ խորհրդավոր, ընդհանրացած ժողովրդական նշանակություն: Դորան շատ նպաստել է, անշուշտ, այն հանգամանքը, որ այլակրոն և այլադավան ազգերով շրջապատված՝ հայերն աշխատել են իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար պարզ և բնորոշ խտիր դնել իրենց և օտարների մեջ, ուստի ինչպես հրեաները մեծ կարևորություն էին տալիս թլիսատության նշանին, որով տարբերվում էին իրենց շրջապատող անթլիսատներից, այդպես և մեզ համար առանձին կարևորություն է ստացել ու մյուտոնի դրոշմը, որով ու Լուսավորչի հոտը տարբերվում էր անհավատ-

ներից, ու նույն իսկ այլադավաններից, որով դրոշմված էին ազգային եկեղեցվո բոլոր սրբությունները: Այս գաղափարը արտահայտություն է գտնում նաև այն գեղեցիկ ավանդության մեջ, թե այժմ մեր եկեղեցվո գործածած ու մյուտոնի օրհնությունը սկիզբն է առնում ու Լուսավորչից, և ամեն անգամ, երբ նոր մյուտոն օրհնելու համար հին մյուտոն ենք խառնում՝ հետն անցնում է ու Լուսավորչի օրհնած մյուտոնի խմորը: Թեպետ կա նաև ավանդություն, որ Հայաստանի առաջին լուսավորիչ ու Թադեոսն արդեն Փրկչի օրհնած յուղ բերել էր հետը Պաղեստինից³, բայց բուն ազգային, ավելի ընդհանրացած և նշանակալից ավանդություն ու Գրիգոր Լուսավորչի մասին եղածն է:

Մենք չունինք ի հարկե պատմական տեղեկություններ այն մասին, թե ու Լուսավորիչ ե՞րբ և ի՞նչպես է օրհնել ու մյուտոնը, թե նորանից առաջ և հետո ինչպե՞ս է ու մյուտոն պատրաստվել և գործածվել. բայց մեր ձեռքը հասել է մի հին հիշատակարան, որ բավական լույս է սփռում այս տեսակետից ու Լուսավորչին շատ մոտ ժամանակի վրա: Ս. Լուսավորչի որդի և երկրորդ հաջորդ ու Վրթանեսի ժամանակակից Երուսաղեմի Մակար արքեպիսկոպոսը ու Վրթանեսին գրած թղթի մեջ⁴ հայտնում է, որ նորա թուղթն իրեն բերող հայ քահանաներից տեղեկացել է, թե ինչպես հայերի մեջ շատ տեղ եկեղեցական մի քանի կարգեր ըստ պատշաճին չեն կատարվում. ուստի պարտք է համարում ցույց տալ, թե ընդհանրական եկեղեցվո մեջ ընդունված կարգերը որո՞նք են և ինչպե՞ս պետք է կատարվին: Այստեղ ի միջի այլոց «սրբության յուղի» համար ասում է, որ եպիսկոպոսապետը պետք է օրհնե, և միայն բացառիկ դեպքերում եպիսկոպոսապետի հրամանով երկու կամ երեք եպիսկոպոս միացած կարող են օրհնել. իսկ հասարակ յուղը, որ գործ է ածվում հիվանդների կամ մեռյալների համար, այլ և մկրտության միջոցին՝ բուն օծման կարգից առաջ, կարող են քահանաներն ու առանձին եպիսկոպոսներ օրհնել: Այս կարգը, որի համար Երուսաղեմի արքեպիսկոպոսը քիչ հետո ավելացնում է, թե սուրբ հայրերից ավանդած էր, ըստ երևութին երկար ժամանակ գրեթե նույնությամբ պահվում էր մեր մեջ: Գոնե Հովհան Օձնեցին, Ը դարի սկզբում, յուր ժամանակին տեղի ունեցող ինչ-ինչ գեղծումների դեմ կանոններ հաստատելով և շեշտելով այստեղ, թե «սուրբ մյու-

¹ 1058—1059 թ.-ներին. տես. Հայոց եկեղեցու հարկերությունները ասորվոց եկեղեցիների հետ. Ե. Վ. Տեր-Մինասյան. ու Էջմիածին. 1908. եր. 209:

² Գիրք Թղթոց. Թիֆլիս. 1901. եր. 345:

³ Թուղթ Ընդհանրական, ու Էջմիածին, 1865. եր. 376:

⁴ Տես Հ. Հ. Տաշյան.—Ցուցակ հայերեն ձեռագրաց. Վիեննա. 1895. եր. 559:

⁵ Գիրք Թղթոց. 407 շ.:

ոռնը, այսինքն անուշահոտության յուղը» Հայրապետը պետք է օրհնե, կարծես թե թույլ է տալիս, որ եպիսկոպոսներն էլ օրհնեն՝ տարին մի անգամ, ավագ հինգշաբթի օրը. իսկ քահանաները նոցանից առնելով՝ լինում են սեղան, եկեղեցի և խաչ, և մկրտությունից հետո դրոշմը տան: Մինչդեռ դրոշմից առաջ գործածվող մկրտության ձեռք քահանան պետք է օրհնե՝ այնչափ միայն, որչափը կարևոր է միանգամից գործածության համար⁶: Պետք է նկատել, որ ուրիշ եկեղեցիներում՝ բացի դրոշմի և օծման համար գործածվող ու մյուտոնից, մինչև այժմ կա քահանայի օրհնած հասարակ ձեռք գործածությունը՝ «օծումն հիվանդաց» կարգը կատարելիս, որ մեր եկեղեցին չունի, և նման դեպքերում: Հոռոմեական եկեղեցու մեջ քահանան դրոշմ տալու իրավունքից զուրկ է. նա մկրտում է երեխային ջրով և օծում յուր օրհնած ձեռքով. բայց բուն դրոշմը կարող է տալ միայն եպիսկոպոսը, որ մի քանի տարին մի անգամ շրջում է յուր թեմը և այդ ժամանակամիջոցում մկրտված բոլոր երեխաներին դրոշմ տալիս՝ ու մյուտոնով, որ ամեն եպիսկոպոս օրհնելու իրավունք ունի: Մեր եկեղեցու մեջ քահանայի ձեռք օրհնելու սովորությունը և բացի ու մյուտոնից ուրիշ որ և է օրհնած ձեռքի գործածություն վաղուց վերացել է: Բայց այս նկատմամբ թե՛ ու Լուսավորչի անմիջական հաջորդների և թե՛ Հովհան Օձնեցու ժամանակ եղած գեղծումներն ու թյուրիմացությունները ցույց են տալիս, որ առաջ էլ դժվար թե ընդհանուր ընդունված սովորություն լիներ այդ: Նույնպես և եպիսկոպոսների մյուտոն օրհնելը հազիվ թե երբ և իցե հաճախ տեղի ունեցած լինի և ամենքի համար հարգելի կարգ եղած: Այդպես եղել է գուցե այն շրջանում, երբ դավանական խտրություն չկար մեր և օտար եկեղեցիների մեջ, կամ երբ, ինչպես Օձնեցու անմիջական մի շարք նախորդների օրով՝ հայության ընդարձակ հատվածներ հունական ազդեցության ներքո էին գտնվում: Այլ ընդհանրապես մեզանում, հայրապետական իշխանությունն սկզբից և եթե այնպիսի կենտրոնացում ույժ ուներ և մանավանդ քաղաքական իշխանության անկումից հետո այնպիսի հեղինակություն ստացավ ամբողջ ազգության աչքում, որ ու մյուտոնի մեջ մարմնացող շնորհաբաշխության իրավունքը՝ իբրև հոգևոր կոչման բարձրագույն արտոնություն, ըստ ինքյան պետք է կենտրոնանար հանձնի Հայրապետի: Որ այդ կենտրոնացումը Օձնեցուց շատ առաջ արդեն տեղի էր

ունեցել, նույնիսկ նորա հաստատած կանոնից կարելի է եզրակացնել այս թե ոչ, եթե եպիսկոպոսները կաթողիկոսի հավասար իրավունք են ունեցել, մանավանդ եթե ենթադրենք, որ տպագրված օրհնակի մեջ մի քանի բառերի վերջավորությունն ու դասավորությունը բնագրի իմաստին համեմատ չէ. կամ բացառությունների մասին չէ խոսք, ի՞նչ հարկ կա սկզբից և եթե շեշտելու. «Պարտ և արժան է զսուրբ միտոնն, այսինքն զիդն անուշահոտության, հայրապետին օրհնել»: Գոնե Օձնեցուց մի դար առաջ կատարված ու մյուտոնի օրհնության մեզ հայտնի ամենահին նկարագրից տեսնում ենք, որ քաջաոհիկ դեր կատարողն այստեղ հայրապետն է, և թույլ չի տրվում ամենին մտածել, թե ամեն մի եպիսկոպոս, կամ եպիսկոպոսների մի խումբ կարող էր մյուտոն օրհնել:

Այդ մյուտոն օրհնությունը կատարվել է մեր եկեղեցվո պատմության ամենանշանավոր օրերից մեկում, որով և առանձնապես խորհրդավոր նշանակություն է ստանում: Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ կազմակերպված եկեղեցին շատ ծանր օրեր էր անցնում է դարի սկզբին. առաջին անգամ նորա մեջ մեծ պառակտում էր հառաջացել և խոշոր հատվածներ նորանից բաժանվելու վրա էին: 80 տարի առաջ բյուզանդական կայսրները, Քաղկեդոնի ժողովի ուսումնառն պաշտոնական դավանություն դարձնելով իրենց պետության սահմաններում՝ շարունակ աշխատել էին նույն դավանությունն ընդունել տալ նաև այս ինքնուրույն եկեղեցական կազմակերպությանը, որ ամուր պահելով նախնայաց հաստատած դավանանքը՝ խորթացել էր կարծես քրիստոնյա արևմուտքից և ավելի հոժարությամբ էր հպատակվում հեթանոս արևելյան պետության. բայց չէին հաջողել: Նոցանից վերջինը սակայն՝ Մորիկ զորեղ և յուր նկատակին հասնելու համար միջոցների մեջ խտրություն չդնող կայսրը, հույսը կտրած ամբողջը միատեղ գրավելուց և օգտվելով արևելքում յուր ժամանակավորապես ձեռք բերած մեծ ազդեցությունից և իշխանությունից, հաջողել էր Զ դարի վերջին պառակտում ձգել այս եկեղեցու մեջ և սպառնում էր մեծ-մեծ հատվածներ խլել նորանից: Չլատելու համար ընդհանրական հայրապետի իշխանությունն ու հեղինակությունը, յուր ձեռն անցած հայկական նահանգներում նա առանձին հակաթոռ կաթողիկոս էր հաստատել տվել Հովհան Ավանեցուն, օրհնական Մովսես Եղվարդեցի հայրապետին թողնելով միայն պարսից իշխանության ներքո գտնվող մասերը: Այս գրավել էր վրաց կաթողիկոս Կյուրիոնին, և սա ավելի

⁶ Հովհաննու Իմաստասիրի՝ Մատենագրությունը. Վեներիկ. 1834. եր. 80:

ու ավելի համարձակ կերպով տարածում էր Քաղկեդոնի ուսմունքը վրաց եկեղեցվո սահմաններում, որ մինչ այդ դավանական, վարչական, ծիսական և այլ ամեն տեսակետներով հալոց եկեղեցու եմթակա անբաժան կրտսեր քույրն էր եղել: Աղվանից եկեղեցին ևս, որ նույն հարաբերության մեջ էր հալոց եկեղեցու հետ, ժամանակավորապես, ինչ-ինչ արտաքին հանգամանքների պատճառով՝ կտրել էր սորանից հոգևոր հաղորդակցությունը և դարձյալ դեպի քաղկեդոնականություն հակամետության նշաններ էր ցույց տալիս: Այսպիսի պայմաններում, Մորիկ կայսեր հետ գրեթե միաժամանակ, վախճանել էր Մովսես Եղվարդեցին և հայրապետական Աթոռը մի քանի տարի թափուր էր մնացել, որ քիչ չէր նպաստել եկեղեցական կազմի խախտվելուն, և ահա Պարսից պետության մեջ մեծ պատվի և իշխանության հասած հալ ճախարարներից մեկը՝ Սմբատ Բագրատունի Վրկանա մարզպանը, ժողովում է նախնյաց ավանդին հավատարիմ մնացած եպիսկոպոսներին և ազգի մեծամեծներին ու նոր կաթողիկոս ընտրել տալիս: Երբ նորընտիր հայրապետը՝ Աթրահամ Աղբաթանեցին, օծումն ընդունեց և հայրենի հավատո սահմանում հավատարիմ մնալու գիր առավ բոլոր ներկա եղող այն եպիսկոպոսներից և հոգևորականներից, որոնք առժամանակ եմթարկվել էին հունական ազդեցության, ջլատված, ճղակոտոր եղած և նորից ի մի ձուլված հոտի առաջնորդները կարիք զգացին իրենց միության ուխտը կնքել պատշաճագույն հանդիսով, և նոցա խնդրանք նոր հայրապետը ս. մյուռոն օրհնեց՝ ոգևորիչ փառավորությամբ: Այս հանդիսի նկարագրության մեջ՝ աաված է՝ ա) որ Մովսես կաթողիկոսի մահից հետո մյուռոն չէր օրհնվել, և Վրթանես վարդապետի տեղապահության ժամանակ հանգուցյալ կաթողիկոսի օրհնած մյուռոնն էր բաժանվել եկեղեցիներին. ուրեմն մյուռոն օրհնելը վերապահված էր կաթողիկոսին, եպիսկոպոսները չէին օրհնում. բ) որ ս. մյուռոն օրհնելուց հետո հայրապետը մյուս օրը բաժանեց բոլոր ներկա եղողներին, և նոքա ուրախ-ուրախ ցրվեցին իրենց տեղերը. այստեղից հավանական է երևում, որ Օձնեցու կանոնն էլ այնպես պետք է կարդալ, թե հայրապետը ս. մյուռոն օրհնում էր, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները տարին մի անգամ նորանից ստանում և գործադրում էին. գ) որ Վրթանես տեղապահը «յուղագործաց արվեստի» համաձայն արդեն նախօրոք պատրաստել էր «օծության

յուղը». մնում էր ամբողջ գիշերը հսկում և պաշտոն կատարել և ամբողջ ցերեկն էլ բուն օրհնության խորհրդի վերա տքնել, մինչև գլուխ եկավ ամեն ինչ. ուրեմն ըստ էականին ս. մյուռոնը, գոնե է դարձու սկզբին՝ նույն կազմությունն ուներ և նույն ձևով էր օրհնվում, ինչ որ այսօր:

Իսկ թե հաջորդ դարերում արդեն ի՛նչ անփոխարինելի սրբություն էր ս. մյուռոնը հայ քրիստոնեի աչքում՝ դրան վկա Ժ դարում մեծ օրհներգակ Գրիգոր Նարեկացին, որ յուր հայտնի աղոթագրքի վերջին խոսքը նվիրել է «սրբալույս յուղուն մյուռոնի» երկարաշունչ օրհնաբանության: Ս. Գրքից վերցրած բազմաթիվ վկայություններով և յուրի աշխարհորեն գործածության օգտավետ կողմերն օրհնակ առնելով՝ որչափ և «թարգմանորեն» (Դիոնեսիոս Արիսպագացուց), բայց դարձյալ իրեն հատուկ ճոխ պատկերավորությամբ, նա մի առ մի նկարագրում է սրբազան յուղով նվիրագործման բազմազան արդյունքներն անցյալում և քրիստոնեի անձի վերա: Այս զարմանահրաշ լուստ օրհնության յուղը, Քրիստոսի անվամբ և ս. Հոգվո շնորհք կնքելով՝ զանազանատեսակ ազգերի բերում իրար է խառնում և դարձնում մի քրիստոսյան ժողովուրդ, նույն երկնավոր Հոր հարազատ որդիներ: Ինչպես որ Հին Ուխտի մեջ որոշված էր գոհի յուղային մասերը կերակրի համար չգործածել, այլ Աստվածության նվիրել, իբրև ճեմներ գոհացողական, այսպես և Նոր Ուխտի մեջ օրհնության յուղը հանդիսանում է իբրև զորություն Տյառն մատչելի, որ մեր հոգուն ճանապարհ է տալիս՝ դեպի երկնային կայանները վերանալու և Արարչին ձոնվելու: Ինչպես ճրագի յուղը լույս է արտադրում և մեր շուրջը լուսավորում, այնպես և սրբալույս մյուռոնը հոգևոր լուսավորության միջնորդ է մեզ համար, և այլն:

Հաջորդ ԺԱ դարում, Բագրատունյաց թագավորության կործանումից հետո, երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, որ ղրժ-բախտաբար շատ տխուր դեր էր կատարել Անի մայրաքաղաքը հունաց ձեռքը հանձնելու մեջ և դորա համար առժամանակ պատվի ու պարգևների արժանացել, Կ. Պոլիս կանչվեցավ, — երկյուղ կրելով իրավամբ, թե մի գուցե չթողնեն իրեն այլ ևս յուր հոտի մոտ վերադառնալ, 400 լիտր մյուռոն երկաթե ամաններով թաղում է գիշերը՝ Ա. հուր-Ախուրյան գետի հատակում, Անի քաղաքի մոտ, որպեսզի հույների ձեռքը չընկնի: Այս զգուշության մի պատճառն այն կա-

⁷ Ուխտանես եպիսկոպոս՝ Պատմություն հալոց. Վաղարշապատ, 1881. եր. 67:

⁸ Մաթթեոս Ուռհալեցի՝ Ժամանակագրություն. Վաղարշապատ, 1898. եր. 104:

րող էր լինել, որ թեպետ Գետադարձը յուր բոլոր որդի խաչիկ Բ-ին յուր փոխանորդ հայրապետ էր կարգել, բայց վախենում էր, որ հունաց բռնության երեսից նա ևս չկարողանա հայրապետական իշխանությունը վարել ուս. մյուսոն օրհնել, և հայերը մնան առանց մյուսոնի. բայց պատմիչի ակնարկած մյուս պատճառն էլ այն էր երևի, որ հույները արհամարհում էին հայերի մյուսոնը, իբրև անցա դավանական խտրությունը շեշտող մի գլխավոր սրբություն, և եթե ձեռք ձգեին, կանարգեին, կամ ոչնչացնելով՝ նեղ դրության մեջ կդնեին հայերին: Այս հաստատում է նույն Գետրոս կաթողիկոսի կյանքի մի ուրիշ դիպված, որ երբ Տրապիզոն էր գնացել Վասիլ Բ կայսեր հետ տեսակցելու համար և Աստվածահայտնության տոնի օրը հրաման ստացավ կայսրից ամենայն շքով Զորահնչաց հանդեսը կատարել՝ ս. մյուսոնը ջրի մեջ կաթեցրած ժամանակ, ասված է⁹, լուսո ճառագայթների մի ցնցող փայլատակեց շուրջը, որ տեսանելի էր ամբողջ բազմության: Այս գրությունը հետո ավելի նոխացրած՝ պատմում են¹⁰, թե ո՛չ միայն սաստիկ հուր ցուլաց ջրի վրա, այլ և գետը մի վայրկյան կապվեց ու անշարժ մնաց՝ իբրև երկնային ապացույց հայոց մյուսոնի սրբության, որ հույները չընդունելով՝ կամեցան էին անցա մյուսոնով սրբված ջուրը նորից օրհնել:

Նման մի նկատմամբ է անշուշտ, որ երբ ԺԲ դարում Ներսես Ծնորհալու օրով միության խնդիր ծագեց հույների և հայերի մեջ, հունաց Մանվել կայսեր կողմից հայոց կաթողիկոսին եղած 9 առաջարկներից մեկն այն էր, որ հայերը ս. մյուսոնը ծառերի պտղից եղած ձիթով պատրաստեին: Ինչպես ժամանակակից մեր եկեղեցվո հայրերը բացատրում են, Հայաստանում ձիթենու լուղ դժվարությամբ ճարելը միայն պատճառ կարող է եղած լինել, որ նախընթաց խոտվահույզ ժամանակներում շատ անգամ հասարակ ձեթ է գործածվել, թե չէ սովորականը և անպայման ընդունելին նաև հայոց համար եղել է միշտ ձիթենու յուղը: Այսպես, երբ 1441 թվին հայրապետական Աթոռը ս. Էջմիածին փոխադրվեց՝ այդ մեծ ձեռնարկության գլխավոր հեղինակներից մեկը, Թովմա Մեծոփեցի վարդապետը, Կիլիկիայում գործադրված զեղծումների թվում, որոնք պատճառ եղան Աթոռի փոխադրության, հիշում է մինչև իսկ, որ «Աստվածագործակ մյուսոնի» փոխարեն հասարակ ձի-

բապտի ձեթ էին գործածում այնտեղ¹¹, այսինքն հայոց եկեղեցվո կանոնի համեմատ նույն ձեթը անուշահոտ խունկերով ու ծաղկունքով չէին համեմտում: Ինչպես ուրիշ եկեղեցական կարգեր, որ նախորդ դարերում Աթոռի աստանդական և օտար ազդեցության ներքո լինելով՝ մասամբ խանգարվել էին, և ս. Էջմիածին փոխադրվելուց հետո նախնաց ավանդության համեմատ վերահաստատվեցան, և ապա անփոփոխ շարունակվեցին մինչև մեր օրերը, այդպես է և ս. մյուսոնի օրհնության կարգը՝ ձիթենու յուղով և անուշահոտ յուղերի, խունկերի և ծաղկանց նյութերի համեմունքով պատրաստելու հնավանդ սովորությունը: Մեծոփեցին մի շարք տեսիլներ պատմելով, որոնք իբրև գուշակություն էին նկատվում ս. Էջմիածնի հրաշալի վերանորոգության համար, հիշում է նաև մի բարեպաշտ հայի իրեն պատմած երազը, թե ինչպես տեսել էր իրեն ս. Էջմիածնի բնափ վրա նստած, գոգը վարդով լիքը, և ամեն կողմից հայեր գալիս այդ վարդից վերցնում էին. ապա ինքն էլ խնույն մեկնում է, թե ս. մյուսոնն է այդ, որ ս. Էջմիածնից պիտի տարածվեր ամեն տեղ¹²: Հիրավի, երբ հայոց ազգի այս մեծերախտ վարդապետն յուր ընկերների հետ այնպես զարմանալի կերպով հաջողեց Աթոռը ս. Էջմիածնում հաստատել և նոր հայրապետ ընտրել ու օծել Կիրակոս Վիրապետուն, անցա կարևորագույն հոգևորից մեկը եղավ՝ Հոգեգալստյան տոնին մեծահանդես ժողովով ս. մյուսոն օրհնել և Հայաստանի բոլոր կողմերն ուղարկել, կանոն դնելով, որ այնուհետև ձիթաբար բաշխվի ամենուրեք ս. մյուսոնը, հակառակ երևի Կիլիկիայում այս նկատմամբ մուտք գործած զեղծումների:

Թեպետ Աթոռի փոխադրությունից հետո ս. Էջմիածինը շատ դառն և տազնապալից ժամանակներ անցկացրեց՝ արտաքուստ շարունակ ծանր բռնության, ճնշումների և կեղեքումների ենթակա, ներքուստ խեղճ, անշուք և մշտակարտ վիճակի մեջ, ունայն տենչերով միմյանց ձեռքից իշխանություն խլող և հաճախ մեկը մյուսից ավելի ապիկոս աթոռակալների խաղալիք, և մոտ երկու դար տևեց այդ թշվառ շրջանը. սակայն աշխարհի ամեն կողմերը ցրված և շատ տեղեր Մայր Աթոռից ավելի ողորմելի դրության մեջ գտնվող հայ ժողովրդի համար այնքան մխիթարական էր մտածել, որ յուր հոգևոր կյանքի մի կենտրոն ունի մայրենի

⁹ Արիստակես Վ. Լաստիվերոցի՝ Պատմություն. Վենետիկ, 1901. եր. 19:

¹⁰ Ուռհալեցի. եր. 50:

¹¹ Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը. Թիֆլիս, 1892. եր. 56:

¹² Նույն Հիշատակարան, եր. 64:

նորի վրա՝ նույն տեղում, ուր ս. Լուսավորիչ յուր առաքելական բարոգության և հայրապետական իշխանության հիմքը հաստատեց. այնքան ամուր էր հավատը, թե առկայծյալ պատրույզը չպիտի շիջաներ և չախջախյալ գավազանը չպիտի խորտակվեր, — մինչ ընդհանրական հայրապետի բարոյական հեղինակությունը գնալով ավելի ու ավելի գորացավ և ս. Էջմիածնի անունը նվիրական դարձավ ամբողջ հայության համար: Մանավանդ ԺԷ և ԺԸ դարերում, Մովսես Տաթևացի վերանորոգիչ հայրապետից սկսած, երբ Մայր Աթոռն իրոք նորոգվեց, շենացավ, կենդանացավ, պայծառացավ, դարձավ լուստ և բարոյական վերածնության մայր հավատարիմ հոտի համար. երբ մի շարք հոյակապ անձնավորություններ հաջորդաբար հայրապետական Աթոռի վերաբազմելով՝ միմյանց գերազանցել էին ձրգտում իրենց շինարարությամբ և Աթոռի ներքին բարեկարգությամբ. երբ նոցա ուղարկած նվիրակները հասնում էին Սպահան, Հնդկաստան, Ղրիմ, Պոլիս, Լեհաստան, Իտալիա, Հոլանդիա, այդ տեղերում պատմական դժբախտ պատահարների բերմունքով հաստատված և նյութական բարօրության հասած հայ գաղութներին՝ հայրապետական ողջույն, Էջմիածնական սրբությունների օրհնությունը, ս. մյուռոն տանում, հայրենի ավերակների և նոցա շուրջը դեռ բլրանության ներքո հեծող ժողովրդյան արյան արցունքի պատմությունը, մայրենի հող ու ջրի կարոտը տանում, և բերում հետև առատ նյութական ճոխություններ, քաղաքակիրթ աշխարհի նորություններ՝ նոր գաղափարներ և ձգտումներ, — ս. Էջմիածնի ու Հայրապետության վարկը յուր բարձրության գագաթնակետին հասավ, և նոցա դարձան ամենքի համար գիտակցաբար սիրելի և պաշտելի մեծություններ. ս. մյուռոն ևս, իբրև նոցանից ընդունած ամենաթանկագին նվերը, նոցա հետ ունեցած հոգևոր կապի ամենախորհրդավոր միջնորդը՝ նույնչափ ավելի հարգի ու նվիրական:

Իբրև նվիրակ և իբրև հայրապետ (1773—1780 թ.) մեր եկեղեցվո պատմության այս նշանավոր շրջանի մի ամենաարդյունաշատ ներկայացուցիչն է հավերժ հիշատակաց արժանի Սիմեոն Երևանցին, և շատ քչերն են եղել նորանից առաջ և նորանից հետո, որ ս. Էջմիածնի բարոյական մեծության, հայրապետական իշխանության վեհության և ս. մյուռոնի սրբության մասին այնպիսի բարձր գաղափար ունենային, ինչպես նա, որի դեռ վարդապետության օրերից շատ ձեռագիր օրհնակներով մնացած բարոգների մեջ գտնում ենք տաղանդավոր և խիստ ոգևորյալ արտահայտությունն այդ գիտակ-

ցության: Այդ բարոգներից մեկում, խոսելով ս. Գրիգոր Լուսավորչի մասին՝ նա ասում է. «Այս ամենագովելի անձը այնքան առաջ գնաց յուր անօրինակ ճգնություններով և անմարմնական վարքով, և այնպես սիրելի ու հանդեպ ամենագթաց Աստուծուն, որ մի անգամ ընդհանուրի փրկության համար եկած Աստուծո Բանին յուր սիրովն ու աղոթքով կրկին անգամ իջեցրեց այս Այրաբառյան երկրում, Վաղարշապատի դաշտում, հայոց բնիկ օթևանում՝ հատկապես հայոց ազգի համար... Եվ այստեղից կենդանաբար ջուր և մշտահոտ աղբյուր բխեց՝ այսինքն ս. Հոգվո բազմապարզ և շնորհքը, որ աստվածագործ մյուռոնի միջոցով բաշխվում է բոլոր եկեղեցիներին, և հավատացյալների հոգիները նորանով ոռոգված՝ պարտաճանում ու պտուղ են տալիս»:

— Մի ուրիշ տեղ ս. մյուռոնի մասին ավելացնում է. «Բահաճապետական բոլոր սրբազնագործությունները մյուռոնով են կատարում ընդունում. ինչպես եկեղեցի, սեղան, խաչ, քահանա և ուրիշ եկեղեցական ամեն ինչ մյուռոնով է օծվում և սրբվում. այդ պատճառով և եկեղեցվո բոլոր խորհուրդների մեջ մկրտությունը և մյուռոնի օծումը գերադաս են, իբրև մնացած բոլորի դուռ և ճանապարհ»:

Հատկապես մյուռոնօրհնության հանդիսի առթիվ ս. Էջմիածնի դիմող ուխտավոր բազմությունն աչքի առաջ ունենալով՝ նա բացականչում է. «Ո՛վ ամենայն եկեղեցիք և եկեղեցականներ, ճանաչեցե՛ք թագուհիների միակ թագուհի ս. Էջմիածինը, որ հայոց ազգի Աթոռն է և Քրիստոսի հատուկ սիրելին. որի մամը ուրիշ ազգեր չունին, որին երանի են տալիս և գովում, որին կարոտում են և տեսնել ցանկանում... Տեսեք և ճանաչեցե՛ք կենդանի ջրո միակ աղբյուր և ջրհոր ս. Էջմիածինը, որ ահա բաշխում է ձեզ, հոռոգումն հոգևոր, կենդանաբար ջուրը՝ սուրբ մյուռոնը: Այն խորհրդավոր արեգակն է և Էջմիածինը, որ առատապես ճառագայթում է դեպի ձեզ աստվածային լույսը՝ սուրբ մյուռոնը, որ ձեր հոգին ու մարմինը պիտի լուսավորե: Վաշեցե՛ք ուրեմն, շնորհակալ եղե՛ք և իմացե՛ք, թե ումից եք ստանում այդ շնորհը»: Դժբախտաբար նույն վստահությամբ և նույն պարծանքով խոսել մենք այսօր այլևս չենք կարող: Սիմեոն Երևանցու օրով այնքան մեծ էր իրոք Մայր Աթոռի կատարած կենդանաբար և լուսատու դերը հայ ժողովրդյան վերաբերմամբ. ինքը բազմերախտ Հայրապետը մանուկ հասակից սնված և կրթված լինելով նույն Աթոռի հովանու ներքո, ամբողջ կյանքը նորա շենությանն ու պայծառությանը նվիրած՝ այնպիսի ջերմ հավատ ունի դեպի նորա

երկնատուր կոչումը, և մահմեդական ազգերով շրջապատված, ասիական թանձր խավարի մեջ կորած մի մթնոլորտում այնքան զգալի էր քրիստոնեի համար նորա հոգևոր գերազանցությունը, որ վերև բերված խոսքերը պետք է համարվին հեղինակի անկեղծ զգացման և համոզման արտահայտություններ: Սակայն դարուկես ժամանակ է անցել այդ օրից և մեզ բերել շատ դառն փորձեր, մեզ համեստ ու նկուն դարձնող բազմադիմի ծանոթություններ: Մեր առջև մի ընդարձակ քաղաքակիրթ քրիստոնյա աշխարհ կա՝ կենդանության և լուսավորության այնպիսի փառաշուք կենտրոններով, որ եթե մենք վստահանայինք իսկ նոցա հանդեպ բերել մեր հոգևոր կյանքի կենտրոնը և պարծենալ սորա պատկառելի հնությունը և պարծենալ հաստատությանը և անցյալ փառքով, սատր պատասխան կտանայինք անշուշտ. իսկ դո՛ւք, նոր ժամանակի սերունդներդ, որչա՞հ արժանավոր ժառանգներ եք արդյոք ձեզ ավանդած բարյաց, ինչպե՞ս եք գնահատում և ի՞նչ միջոցներով ներգործական դարձնում նոցա հոգեվոր ույժը. ի՞նչքան պայծառ եք պահում

արտաբուստ և կենդանի ներքուստ ձեր հայրենի տունը: Եվ ափիքերան պիտի մնայինք մենք: Եվ թողնելով, որ յուրաքանչյուր քրիստոնյա ժողովուրդ յուր ազգային սրբություններին գերազույն արժանիք վերագրե և պատշաճավոր հարգն ընծայե նոցա, դառնայինք և մեր փառապանծ ժառանգության բաղդատմամբ մեր անպարտաճանաչ խեղճությունը սգայինք. բայց և նոր ոգի ու նոր եռանդ ստանայինք, հսկառակ մեր ապաշնորհության՝ Մեծ Լուսավորչի և մեր երջանիկ նախնյաց անդույ աղոթքի և անսպառ երախտյաց շնորհիվ դեռ կանգուն և միշտ հաստատ տեսնելով Մայր Աթոռը, նորոգ օրհնությամբ սրբալույս մյուռոնի միշտ կենդանի և կենդանարար շնորհաբաշխ ս. Հոգին քրիստոնյա հայության մեջ. ձայնեինք միմյանց, և դարե ի դար հնչող այս ձայնը արձագանք տար հայ սրտերում. Եկե՛ք, եղբա՛րք, շեն-վստ պահենք լուստ այս սուրբ խորանը, որ այստեղից ծագե միշտ լույս մեր Հայաստան աշխարհին:

(«Արարտ» ամսագիր, Վաղարշապատ, 1912, էջ 780—794)

